**Տեղեկանք**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 189.25. ԱՄՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՄԵՋ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺՆԻ ՊԱՀԱՆՋԸ ԽԱԽՏԵԼԸ**

1. Ազգային ֆիլմերի մասնաբաժինն ամսական ընդհանուր ֆիլմերի ցուցադրման մեջ 20 տոկոս կազմելու պահանջը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապապատիկի չափով:»

**ՀՈԴՎԱԾ 189.26. ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԳՈՎԱԶԴԻ ՎԱՃԱՌՔԻՑ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ ԽԱԽՏԵԼԸ**

1. Հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից և կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Հեռարձակմամբ ազգային ֆիլմի ցուցադրման ընթացքում տեղադրվող գովազդի վաճառքից և կինոթատրոնում ազգային ֆիլմի ցուցադրման տոմսերի վաճառքից ստացված եկամուտների վերաբերյալ կեղծ տեղեկություն տրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ֆիլմ ցուցադրողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

## ՀՈԴՎԱԾ 189.27. ԱՌԱՆՑ ՎԱՐՁՈՒՅԹԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՖԻԼՄԻ ՎԱՐՁՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ

1. Առանց վարձույթի վկայականի ֆիլմի վարձույթ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ կրկին անգամ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում վարձույթ իրականացնողի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

## ՀՈԴՎԱԾ 223. ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Վարչական դատարանները քննում են՝

1) սույն օրենսգրքի 41.5, 97.2, 97.3, 147, 166.1, 172.3 հոդվածներով, 180.1, 182, 183.1, 189.2-189.6, 189.9-189.10 հոդվածներով, 189.25-189.27 հոդվածներով, 198.2 հոդվածի չորրորդ մասով և 206.5, 206.10, 206.11, 206.12, 206.13, 206.16, 206.14 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 170.5, 189.7, 189.18 հոդվածներով և 198.2 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 206.9 հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.

4) սույն օրենսգրքի 206.8 հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 206.15-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով.

5.1) սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական դեպարտամենտի ղեկավարի) հայցադիմումով.

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով: